ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 233-Ա «16» հունվարի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 144 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԵՐԵՎԱՆԻ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԵՐԵՎԱՆԻ Վ.Գ.ԲԵԼԻՆՍԿՈՒ ԱՆՎԱՆ Հ.38 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի Հ.4046-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 32-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգով, հիմք ընդունելով «Երևանի հ. 144 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 29-ի (հ. 25 արձանագրություն), ծնողական խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի (հ.3 արձանագրություն) որոշումները և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի 2026 թվականի հունվարի 15-ի հ. Ն/1716-26 զեկուցագիրը.

1. Դադարեցնել «Երևանի հ.144 հիմնական դպրոց», «Երևանի Վ.Համբարձումյանի անվան հ.12 հիմնական դպրոց», «Երևանի Վ.Գ.Բելինսկու անվան հ.38 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամներ Հերմինե Սիմոնյանի և Սուսաննա Իորդամովայի լիազորությունները:

2. Երևանի քաղաքապետի 2024 թվականի հոկտեմբերի 21-ի «Երևանի մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների կազմերը հաստատելու, Երևանի քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 25-ի հ.632-Ա, 2021 թվականի հուլիսի 22-ի հ.596-Ա, 2597-Ա, 2598-Ա, 2599-Ա, 2600-Ա, 2601-Ա, 2602-Ա, 2603-Ա, 2604-Ա, 2605-Ա, 2606-Ա, 2607-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ» հ.4046-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 10-րդ հավելվածի 7-րդ կետի 3-րդ սյունակում՝ «Սիմոնյան Հերմինե» բառերը փոխարինել «Ղավալյան Ռուզան» բառերով.

2) 10-րդ հավելվածի 7-րդ կետի 4-րդ սյունակում՝ «Իորդամովա Սուսաննա» բառերը փոխարինել «Ազատյան Աննա» բառերով:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումը և պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետին:

4. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ